

ԹԻՎ 34 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«25» սեպտեմբեր 2024թ.

ք. Գորիս

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ (ՄԱՆԴԱՏԻՑ ՀՐԱԺԱՐՎԱԾ) ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով 2023 թվականի մարտի 26-ին կայացած Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու ընտրություններին մասնակցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու՝ Վլադիմիր Նվերի Ղազարյանի կողմից թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված նոտարական կարգով վավերացված ինքնաբացարկի և մանդատից հրաժարվելու մասին դիմումը՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու՝ Վլադիմիր Նվերի Ղազարյանի գրանցումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ԹԻՎ 34 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԿ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

